ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/02

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.05.2017թ. թիվ 03/73-3/7522-17 գրությամբ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1.<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 11.04.2017թ. թիվ Ե-2453 գրության հիման վրա, 02.05.2017թ. թիվ 03/73-3/7522-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 11.05.2017թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հրավերի պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագրի մեջ որոշ ապրանքների մասով բացի տեխնիկական բնութագրից ներկայացված է հետևյալ գրառումը. «Մատակարար ընկերությունը պարտավոր է ներկայացնել նամակ-հավաստագիր արտադրողի կողմից, որը թույլ է տալիս մատակարարին պաշտոնապես ներկրել տվյալ փոշին (տոներ) Հայաստանի Հանրապետություն»:

Ընկերությունը վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ սովորաբար արտադրողի կողմից որպես որակի հավաստում տրամադրվում է երկու տեսակի պաշտոնական փաստաթուղթ՝ MAF (Manufacturers Authorization Form, որը տրամադրվում է արտադրողի ներկայացուցչին կոնկրետ պատվերին կամ մրցույթին մասնակցելու համար, որով արտադրողի ներկայացուցիչը պարտավորված է լինում հետագայում վաճառել այդ ապրանքը) և Sertifikat of original (ապրանքի ներկրման ժամանակ ուղեկցող փաստաթուղթ):

Ընկերությունը գտնում է, որ հրավերում հստակ ֆիքսված չէ, թե որ փաստաթուղթը ի նկատի ունի գնորդը և երբ դա պետք է տրամադրվի՝ Ընթացակարգի փաստաթղթերի հետ, թե ապրանքը մատակարարելիս: Ըստ գնորդի բանավոր պարզաբանումների՝ Ընկերությունը որպես 15-րդ չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ներկայացրել է նամակ-հավաստագիր (Manufacturers Authorization Form), հետագայում գնորդի 24.03.2017թ. նամակի պահանջով այն Ընկերության կողմից ներկայացվել է նաև հայերեն թարգմանված, նոտարի կողմից կնքված տարբերակով: Դրան զուգահեռ ներկայացվել է տեխնիկական բնութագիր, որի մեջ Ընկերությունը չի ներառել նամակ-հավաստագրի ներկայացման պահանջը, համարելով, որ նամակ-հավաստագիրը ներկայացնելով Ընկերությունը բավարարել է բնութագրի այդ պարբերականի պահանջը, սպառելով Ընկերության կողմից ներկայացված բնութագրում դրա ներառելու իմաստը: Ի դեպ՝ ներկայացված նամակ-հավաստագրի նկատմամբ որևէ առարկություն չկար, սակայն

Պատվիրատուն որոշել է մերժել հայտը այդ չափաբաժնի մասով՝ պատճառաբանելով, որ տեխնիկական բնութագիրը թերի է:

Նույնատիպ պատճառաբանությամբ այլ մասնակցի մերժված 14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Ընկերությունը ներկայացրել է տեխնիկական բնութագիրը (ավելորդ բարդություններից խուսափելու համար՝ ներառելով տեխնիկական բնութագրի մեջ նամակ-հավաստագրի պահանջը) և բացարձակ նույն բովանդակությամբ նամակ-հավաստագիրն արդեն 14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով: Այս անգամ գնահատող հանձնաժողովի մոտ անհիմն կասկած է առաջացել, թե այդ փաստաթուղթը տրամադրված չէ արտադրողի կողմից: Ընկերությանը ներկայացվել է տարօրինակ պահանջ, համաձայն որի նշված փաստաթուղթը պետք է տրամադրվի ոչ թե տիրոջ, այլ այն գործարանից, որտեղ ապրանքանիշի տերը պատվիրում է արտադրել իր ապրանքը: Բնականաբար Ընկերությունը փորձել է տալ բացատրություն, որ տվյալ պահանջը իմաստազուրկ է, սակայն Պատվիրատուն մերժել է Ընկերության հայտը նշված չափաբաժինների մասով:

Հաշվի առնելով ներկայացված փաստերը՝ Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ որոշումներն անհիմն են, քանի որ հրավերում ներառված է ապրանքի ոչ հստակ ձևակերպված նամակ-հավաստագրերի պահանջ, ինչը հետագայում տվել է օրենքից դուրս, կամայական մեկնաբանությունների տեղիք, իսկ Պատվիրատուի պահանջները բավարարելու Ընկերության բոլոր փորձերը և բանակցությունները մնացել են ապարդյուն, ինչը ինքնին հաստատում է Ընկերության այն կարծիքը, որ օրենքում չսահմանված պահանջները կամ չպետք է ներառվեն հրավերում, կամ ներառվելուց պետք է ձևակերպվեն հստակ և հասկանալի:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 11.05.2017թ. ժամը 14:35 նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը 11.04.2017թ. թիվ Ե-2453 գրությամբ ներկայացրել է ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 11.05.2017թ. ժամը 14:35 նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնավորապես, հրավերով պահանջվել է համապատասխան չափաբաժինների մասով ներկայացնել նմակ-հավաստագիր՝ տրված արտադրողի կողմից, մինչեռ Ընկերության կողմից ներկայացված փաստաթուղթը ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է որպես անբավարար, քանի որ այն չի տրվել արտադրողի կողմից:

<u>3. ՍՑ-ԱՄ-2017/02 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/02 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17» ծածկագրով ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետը սահմանում է հետևյալը.

«3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար

առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի՝ ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստին է ուղարկում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը.

բ) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3.2 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.3 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:»:

3. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագրով (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր) Ընթացակարգի 2-րդ, 9-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է, ***որ մատակարար ընկերությունը պարտավոր է ներկայացնել նամակ-հավաստագիր արտադրողի կողմից, որը թույլ է տալիս մատակարարին պաշտոնապես ներկրել տվյալ փոշին (փոներ) Հայաստանի Հանրապետություն:***

4. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով նախատեսվել է Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

15	Փոշի (Տոներ)	Փոշի (Տոներ) KYTK1125UNIV Kyocera FS-1040, կամ համարժեքը պատճենահանման մեքենայի համար: փաթեթավորումը՝ պլաստմասե տարայով, պարունակությունն ոչ պակաս 95 գր-ից: Մատակարար ընկերությունը պարտավոր է ներկայացնել նամակ-հավաստագիր արտադրողի կողմից, որը թույլ է տալիս մատակարարին պաշտոնապես ներկրել տվյալ փոշին/տոներ/ Հայաստանի Հանրապետություն:	հատ	200

5. ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն:

6. Ընկերությունը հայտի թիվ 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 1-7, 10, 11, 13, 13-18, 20-25, 27-31,33-37 չափաբաժիններում նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում է (են) «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 3-րդ կետով «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ

զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 15-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ, իսկ 28.03.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 8 արձանագրության 4-րդ կետով՝ Ընթացակարգի 14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով, և Ընկերությունը սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.03.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրել է, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով սահմանված նամակ-հավաստագրի պահանջը: Ընկերության նամակ-հավաստագիրն անհրաժեշտ է ներկայացնել հայերեն լեզվով կամ դրա նոտարական կարգով վավերացված օրինակը: Ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ Ընկերությանը ծանուցելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.03.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով՝ այն հիմնավորմամբ, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում մասամբ է շտկել արձանագրված անհամապատասխանութ-յունները, մասնավորապես չի ներկայացրել տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.04.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 10 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ Ընթացակարգի 14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները հիմնավորող փաստաթուղթը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին (նամակ-հավաստագիրը տրված չէ արտադրողի կողմից): Ուստի գնահատող ահանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ ծանուցելով Ընկերությանը արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

11. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 11 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը

Ընթացակարգի 14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով, պատճառաբանելով, որ Ընկերության կողմից ներկայացված նամակով չի հիմնավորվում փաստաթղթի (նամակ-հավաստագրի)՝ հրավերի պահանջներին համապատասխանությունը:

12. Ընկերությունը Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է տեխնիկական բնութագիր, որում նշել է ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը հետևյալ տեսքով՝

15	Փոշի (Տոներ)	Փոշի (Տոներ) Hi-Black KYTK1125UNIV Kyocera FS-1040, պատճենահանման մեքենայի համար, փաթեթավորումը պլաստմասե տարայով, պարունակությունն ոչ պակաս 95 գր-ից:	հատ	200

և չի նշել հրավերին Տեխնիկական բնութագրի մեջ ամրագրված՝ «Մատակարար ընկերությունը պարտավոր է ներկայացնել նամակ-հավաստագիր արտադրողի կողմից, որը թույլ է տալիս մատակարարին պաշտոնապես ներկրել տվյալ փոշին (տոներ) Հայաստանի Հանրապետություն» պարբերությունը:

13. Ընկերությունը, որպես Ընթացակարգի հրավերին Տեխնիկական բնութագրով նախատեսված արտադրողի կողմից տրված նամակ-հավաստագիր՝ ներկայացրել է «ՎՏՏ-ԴՈՆ» ՍՊԸ-ի (ք. Դոնի-Ռոստով, Նանսենի թող., շ. 146, լիտեր Կ) կողմից տրված նամակ-հավաստագիրն առ այն, որ Hi-Black և NetProduct ապրանքային նշանները պատկանում են «ՎՏՏ» ընկերությանը և հաստատում է, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն հանդիսանում է «ՎՏՏ» ընկերության գործընկերը և սկսած սույն նամակի ամսաթվից՝ ոչ բացառիկ լիազորված ապրանքային միջնորդը Հայաստանում Hi-Black և NetProduct ապրանքային նշանի՝ «Hi-Black Kyosera ECOSYS M2040/M2540 (TK-1170) Bk, 290q, HP LJ PR M402/MFP M 426, Տեսակը՝ 4.1, Բկ, 150ք համար Hi Black» արտադրանքների վաճառքի համար:

4.<u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.05.2017թ. թիվ 03/73-3/7522-17 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 11.04.2017թ. թիվ Ե-2453 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ ***գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին

ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:***

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի՝ ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստին է ուղարկում ***նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է՝***

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը.

բ) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 1-ին կետի 1.2-րդ ենթակետի համաձայն՝ ***նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:***

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն ՀՀ դատական դեպարտամենտի կողմից կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական

բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 1-7, 10, 11, 13, 13-18, 20-25, 27-31,33-37 չափաբաժիններում նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում է (են) «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերին և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն պարտավորում է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընկերությունն ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է տեխնիկական բնութագիր, որում նշել է ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը հետևյալ տեսքով՝

15	Փոշի (Տոներ)	Փոշի (Տոներ) Hi-Black KYTK1125UNIV Kyocera FS-1040, պատճենահանման մեքենայի համար, փաթեթավորումը պլաստմասե տարայով, պարունակությունն ոչ պակաս 95 գր-ից:	հատ	200

Իսկ Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով նախատեսվել է Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

15	Փոշի (Տոներ)	Փոշի (Տոներ) KYTK1125UNIV Kyocera FS-1040, կամ համարժեքը պատճենահանման մեքենայի համար: փաթեթավորումը՝ պլաստմասե տարայով, պարունակությունն ոչ պակաս 95 գր-ից: Մատակարար ընկերությունը պարտավոր է ներկայացնել նամակ-հավաստագիր արտադրողի կողմից, որը թույլ է տալիս մատակարարին պաշտոնապես ներկրել տվյալ փոշին/տոներ/ Հայաստանի Հանրապետություն:	հատ	200

Այսինքն, Ընկերությունը ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ չի ներառել միայն «Մատակարար ընկերությունը պարտավոր է ներկայացնել նամակ-հավաստագիր

արտադրողի կողմից, որը թույլ է տալիս մատակարարին պաշտոնապես ներկրել տվյալ փոշին/տոներ/ Հայաստանի Հանրապետություն» պարբերությունը, ինչը հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.03.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը:

Մինչդեռ Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, վերը նշված հիմքով մերժելով Ընկերության հայտը, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ ամբողջությամբ արտացոլված է առաջարկող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը (նկարագրությունը), որպիսի պահանջ սահմանված է Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետով: Մասնավորապես, Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը սահմանում է, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև ***առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը, որը և կատարվել է «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից:***

Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 1-ին կետի 1.2-րդ ենթակետը սահմանում է, որ ***նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել նույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:*** Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ պահպանվել են սահմանված վավերապայմանները, և Հրավերի Տեխնիկական բնութագրի մեջ նախատեսված «Մատակարար ընկերությունը պարտավոր է ներկայացնել նամակ-հավաստագիր արտադրողի կողմից, որը թույլ է տալիս մատակարարին պաշտոնապես ներկրել տվյալ փոշին (տոներ) Հայաստանի Հանրապետություն» պարբերությունը մասնակցի կողմից ներկայացվող տեխնիկական բնութագրում չնախատեսելը չի կարող դիտարվել որպես պահանջվող էական վավերապայմանի փոփոխություն: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը սույն մասով թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորության խախտում, ուստի Ընկերությանը սույն հիմքով Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագրով նախատեսված՝ արտադրողի կողմից նամակ-հավաստագիրը Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կարգով ներկայացնելու պահանջին, ապա Խորհուրդը հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ ***գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):***

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ սահմանում է այն որակավորման չափանիշները, որոնք պետք է ունենա մասնակիցը, դրանք են՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը սահմանում է, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի՝ համապատասխան էլեկտրոնային փոստին է ուղարկում ***նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է՝***

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը.

բ) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը...:

Վերլուծելով վերոհիշյալ նորմերը կարելի է եզրակացնել, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրով նախատեսված՝ մատակարար ընկերության կողմից ներկայացվելիք արտադրողի կողմից տրված նամակ-հավաստագիրը չի հանդիսանում ոչ տեխնիկական բնութագիր և ոչ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթուղթ, ուստի և այն չի ներկայացվում Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կարգով և ժամկետում: Բացի այդ հրավերի Տեխնիկական բնութագրով ուղղակիորեն նշված է, որ արտադրողի կողմից տրված նամակ-հավաստագիրը ներկայացվում է ***մատակարար ընկերության*** կողմից, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը կնքվում է գրավոր: Հետևաբար ընկերությունը կհամարվի մատակարար միայն սահմանված ձևով կնքված պայմանագրի առկայության դեպքում, ինչը ևս մեկ անգամ հաստատում է այն փաստը, որ Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագրի համաձայն՝ արտադրողի կողմից տրված նամակ-հավաստագիրը ներկայացվում է մատակարար ընկերության կողմից՝ ապրանքը մատակարարելիս:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն սույն մասով ևս թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով նախատեսված՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.05.2017թ. թիվ 03/73-3/7522-17 գրությամբ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00861057) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**